


Նորադադները շուրջացան խորհուրդներու գոյութիւնը, բայց անոնց գոյութեան և թիւին մասին յայտնեցին տալիս ի կարծիքներ, որոնք չէին համաձայն անոնց մասին եկեղեցւոյ ցայն վայր ունեցած համոզումին: Լուսեր կ'ըսէր թէ խորհուրդները Աստուածային խոստմանց նշաններ կամ կնիքներ են, հաւատք արթնցնելու և ժողաց թողութիւն ստանալու համար Գրիստոսի միջոցաւ: Կալվին խորհուրդները կը կոչէր Աստուածային շնորհաց նշաններ, որոնք ընտելային մէջ վստահութիւն կը շինեն Գրիստոսի հաւատքին և խոստումներուն մասին: Չաւինկլ կ'աւելցնէր թէ խորհուրդները նշաններ են, որոնցմով մարդ եկեղեցւոյ առջև կը հաստատէ Գրիստոսի հեռեղ կամ զինուոր լինելը, և որոնք եկեղեցիին հաւատարմ կու տան մէկու մը հաւատքին մասին, աւելի քան զոր մէկը կրնայ առ իր մասին: Կրկնակնունքները խորհուրդները կը կարծեն շնորհաց

կեանքի աշխարհական նշաններ: Ս. Կրիստոս և իրենց համախոհները կ'ըսեն թէ խորհուրդները արտաքին սին տրորողութիւններ են, որոնցմով քրիստոնեաները կը զանազանուին ուրիշ կրօններու հետեղներէն: Ըստ Գուէյքերիսեու, խորհուրդները հոգեւորական գործեր են՝ ներքին արդիւնք երկնային լոյսին: Կան ալ որոնք խորհուրդները կը համարին խորհրդաւոր նշաններ, Աստուծոյ մարդաց հետ միաւորութեան: Եւս քալուր բացատրութիւնները թէ և իրարմէ տարբեր, բայց համաձայն են ուրանալու համար խորհուրդին իսկական պայմանները՝ ուղիղ դաւանութեան համեմատ, ու հեռացնելով շնորհաց ներգործութիւնը և նշանակութիւնը գործելին զործէն ըստ կամաց Գրիստոսի, կը թողուն միայն սին տրորողութիւն մը կամ լոկ արտաքին նշաններ՝ հաւատք արթնցնելու կամ հաւատացեալները ճանշնալու համար:

(Շառաւիղի 30)

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊՍ. ՕՐՄԱՆԵԱՆ



Եթէ մարդիկ հաւաքէին
Ոսախօսներն այս աշխարհին,
Եւ ուզէին կախել զանոնք,
Վստահ եմ թէ երկրի վրայ
Անկարելի պիտի ըլլար
Ճարել այնքան ծառ ու գերան
Գործածելու անոնց համար
Իրեւ օդակ ու կախաղան:

Թիւր աս է այդ վատերոն,
Տկարներուն անբարեխիղմ:
Եթէ անոնք վերածուէին
Անճրեղներու կաքիլներուն,
Պիտի ըլլար քակիզք մը նոր
Մեր օրերու ջրհեղեղին:

ԵԶՈՎՊՈՍ

